

ՀԱՅԵՆ

Հայրենեաց



ՀԱՅԵՆ
AMERICAN HAI PUBLISHING CO
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING CO
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.60 a Year.

ՇԱԲԱԹ-ՍԻՒՆԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ և ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

Մեր լսարանները. — Կիրակնօրեայ վարժարան. — Նամակ Բարիզէն. — Նամակ Պուլիպիայէն (Ֆիլիպէ). — Մասենախօսութիւն. — Չուրի Կէտուկի կը- ուրը. — Ուր են շորս որուհիները. — Քաղաքական. — Ներքին լուրեր. — Բանասիրական (Շարժումը կեանք է եւ կեանքը շարժում):

ՄԵՐ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

Մեր լսարաններու նոր շրջանը սկը- սեց: Բոլոր լսարանները բացուած են:

Հարկ է բացատրել լսարանի օգուտ- ները: Հո՞ւ, լսարանը մամուլին զուգըն- թաց և աւելի գեր ունի, եթէ միայն մանր լաւ ու օգտաշատ ուղղութեան մը մէջ:

Կենդանի խօսքն է որ հոն կը գործէ և խօսքը ժողովուրդները բարձրացու- ցած, ժողովուրդները ձգած է, շատ ան- գամ միայն և միայն կենդանի մի խօսք ազգերու բաղքը վճարած է:

Ընթերցանութեամբ մարդ չի կրնար ունենալ այն զօրաւոր մտապնտկերը, ինչ որ լսելից զգայարանը կը ներգործէ մտքին վրայ:

Օգտաշատ ուղղութիւն տա՛նք մեր լսարաններուն: Շատ անգամ այս կամ այն լսարանի մէջ ներկայ գտնուած եմ ո՛ր և է ասենախօսութեան, և վերջը սո- վորութեան համաձայն քովիններուս հար- ցուցած:

— Ի՞նչպէս էր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԸ ՇԱՐՇՈՒՄ Է
ՆԻ ՇԱՐՇՈՒՄԸ ԿԵԱՆՔ

(Շարունակութիւն Նախորդ Թուէն)

Անգամ մը հայ ժողովուրդը պատ- րաստուած համարելով՝ թուրք և քիւրա գործաւոր դասակարգին ալ պարբերա- կան հրահրներ կարգաւ սկսաւ, որպէս զի անտեսական կեանքի այս անհասար- քութեան ուժով ու վերջնական պետա- կան հարուած մը տան: Պէտք էր մէկ անգամէն խորտակել գարիգալիտը եւ անոնց ոյժ տուող կառավարութիւնը: Վճռական վայրկեանը հասաւ, հարուածը իջաւ, մեր արտասահմանի հերոսները ծափ զարկին, անոնց հերոսը փայլեցաւ, կարմիր ողջոյններով իրար բարեկեցին, յաղթութիւն հռչակեցին ամեն կողմ, սակայն բանից դուրս եկաւ որ՝ Պետու- թիւնը կանգուել կը կենար, թուրք ու քիւրա աւազակները գարիգալիտ էին դարձած, հայ ժողովուրդը ընդհանուր առումով մուրացկանութեան աստիճանի էր հասած, և հարիւր հազար խեղճ, այս- պէս սասած՝ հայ գարիգալիտներու գե-

— Շատ հիանալի, շատ բարձր. — Իսկ, ի՞նչ հասկցաք, ի՞նչ նոր բան սովորեցաք: — Օ՛, այնքան բարձր խօսեց, այնքան հիանալի, վսեմ, որ ոչինչ հասկցայ: Այ ո՛ւր կը մնան շուրջուած ամական- ները, երբ ունկնդիրը բան մը չի հասկցեր: Եթէ ասենախօսը խօսելու արուեստը գիտէ, գովելի է: Բայց երբ արուեստին կը զոհուի միտքը, նպատակը, առ դա- տապարտելի է: Երբ, ըլլալ թէ գրուած և թէ խօսուած, անհասկանալի պիտի մը- նայ մեծամասնութեան մը, որչափ ալ իր մէջ մեծ զննորհք (!) մ'ունենայ, անօ- գուտ է և ունայն:

Բայց լաւ արուեստագէտ մը լաւ ալ կ'արտայայտէ ու կը պակասէ իր միտքը, անոր խօսքը, — որ ուրիշի մը չըթուեց- ներուն վրայ կրնար անցնել շատ պող կերպով, — զգաւոր մնալու հետ կը խօսի: Ուրեմն մեր լսարաններու օգուտը փընտ- աելու է աւելի յիւթերու ընտրութեան ու ուղղութեան մէջ:

Շատ անգամ մեր լսարաններու մէջ կը խօսուին այնպիսի նիւթերու վրայ, որոնցմէ ոչ մի դրական օգուտ չի կարելի սպասել, թողուեց այն որ խօ- սողն ո՛չ մարտած և ո՛չ ալ տիրապետած է իւր նիւթը, և կը խօսի ո՛չ թէ գիտա- կան ու իմաստասիրական պաշարով, այլ լոկ իր անձնական սխալ ենթարութիւն- ներէն ու քմահաճոյքէն առաջնորդուած: Շատերը բնմ կը բարձրանան առանց ո- չինչ գիտնալու, և ո՛ր աւելի քննադա- տելին է նախապէս առանց ոչինչ սով- րելու: Եւ արդե՛օք, ունկնդիր մը պո- ռջըտու ընելէ ի՞նչ պիտի հասկնայ: Հա- պա՛ մեծ դիւս՛ ազգէտ ասենախօսները,

որոնք ամբողջ աշխարհի քաղաքականու- թիւնը իրար կը խառնեն, իրենք կը հաս- կընան թէ ինչ կը խօսին, որ կարելի ըլ- լար սպասել թէ հասարակութիւնը կը հասկնայ:

Այս կերպ անօգուտ ուղղութիւնը կարելի է ընդդէմը նորաստեղծ բառով մը՝ ճառագարողական ուղղութիւն:

Լսարանի միակ նպատակը պիտի ըլ- լայ՝ ճանչցնել ու սովորեցնել: Ծանօթա- ցունել շրջապատը, օտարն, անոր անց- եալը, ներկան ու կեանքը:

Եւ էն գլխաւորը. լաւ պատեհութիւն մը չէ՞ լսարանի մ'ընթաց ազգային ինք- նաճանաչութիւնը զարգացնելու: Աւ այդ ինքնաճանաչութիւնը ազգային անցեալի ու ներկայի հմուտ ծանօթութեան մէջ կը կայանայ: Մեր անցեալ պատմութիւնը իր ընդհանուր առումը, թէ իր փառքով և թէ իր նսեմութեամբ ներկային մեծ դաս մըն է: Իսկ ներկայի ճշգրիտ ու- սուտնախօսութիւնը միայն կրնայ հանել հայ ցեղը օրուայ անհասկացող ու ցի- րուցան վիճակէն և հաւաքել ազգային մի գաղափարի շուրջ, առաջնորդելով զանի դրական կերպով դէպի հայրենեաց անզուգական շահը: Ներկայի ուսուցնա- սիրութեան մէջ մեծ տեղ մը պիտի բռն- նէ ասարգիւր ու ցրուած հայ ժողովրդի զանազան մասեր իրար ծանօթացնելը: Կարեքին ու ցաւին գիտակցութիւնը միայն կրնայ հրաւիրել հեռուոր եղբորը սպե- դանի դնելու իսկական վէրքին վրայ, և ո՛չ թէ վէրքը չը ճանչնալով, — թէ և բա- լիմտութեամբ, — բացուած վէրքին քով նոր վէրք մըն ալ բանալու սխալին մէջ ինչալ: Ժամանակի փորձերը առ անգի- տակցութեանէն ծնած աղէտալի պատմու-

թիւնները տուին մեզ: Ուրմն մեր լա- րաններու ճակատին էն առաջ պիտի գըր- ուի «Ծանիր զքեզ»:

Կընդունինք թէ Հոն անհրաժեշտ են և պարզ գիտական ու առողջապահական գիտելիքներ ալ, բայց կը նախընտրենք ազգային կեանքի ուսուցնասիրութիւնը: Սովորինք պատմութիւնը: Հոն պիտի գտնենք մեր ազգային շահն ու զարգա- ցումը:

Վ. ՇԱՀԷՆԻ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՓԱՐԱՆ

Բնաւ Հայերէն կարգաւ գրել չգիտ- ցողներուն մայրենի լեզուն ուսուցանե- լաւ, և քիչ մը գիտցողներուն գիտցած- ներն աւելի մշակելու ու զարգացնելու դիւրութիւն մը տալու համար որոշուած է Կիրակնօրեայ վարժարան մը բանալ: Պիտի աւանդուի Հայոց լեզուի, Ուղղա- գրութեան, Նամակագրութեան և Թուա- բանութեան դասերը:

Կանոնաւոր ուսուցչական խումբ մը պիտի ըլլայ, դասերը պիտի աւանդեն, Պ. Սուրէն Սուրէնեան, Պ. Ղ. Պոյաճեան և Պ. Վ. Շահէնի: Հարկ չկայ յայտարարել թէ ուսումը ձրի է:

Փափաքողներէն կը խնդրենք որ հա- ճէին սոյն շարաթ երեկոյ ժամը 7 1/2 Էն Հայ Երիտասարդաց Գրադարան գալ, հոն րո- լորի համաձայնութեամբ ժամանակն որո- չելու և դասերի բաժանումը ընելու հա- մար:

Անոնք որ այս երեկոյ չեն կրնար ներ- կայ գտնուիլ, նամակաւ կամ անձամբ դիմելու են առ Պ. Վ. Շահէնի:

Կիրակնօրեայ վարժարանի ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԽՈՒՄԻՐ

Մեր գործակալներէն կը խնդրէինք ետ դրկել «Չայն Հայրենեաց»-ի 3 եւ 7 թիւերը:

այդ կենսական պէտքն էր որ կը պակ- սէր. կոշտ ուժը կը գործէր, և հայու- թիւնը իր ձգտումներն իրականացնելու շարժումին մէջ կեդրոնաձգ գորութե- նէ մը աւելի կեդրոնախոյոյն գորութեամբ մը կը կառավարուէր և դժբաղդութիւ- նը անխուսափելի էր:

Եթէ հայութեան մէջ հոգեւոր բարձր թռիչները և միտումները գոյութիւն չունենային, մենք կրնայինք ըսել կորու- հայութիւնը, ինչպէս կը կորուսի վար ընկող աստղը՝ երբ իրեն համար գծուած ծիրէն մազի մը չափ խոտորի. յաճախ գիշեր ժամանակ մենք անոնց կրակի շեշտերով երկարաձգուած հետքը կը տես- նենք օդի վերնախաւին մէջ. սակայն հայը քիչ շատ գիտակցութիւն ունեցող ազգ: Իմացականութեամբ արթուն՝ կա- րող է ըմբռնել իր մտքի շարժման, հո- գեկան ձգտումներու և սրտի զգացմանց սխալ գայթակումները և շտկել զանոնք:

Եթէ այ՛ հաւատքն ունինք թէ հայը իր գոյութեան իրաւունքը պէտք է պաշտ- պանէ և իբր ազգ՝ պէտք է որ նա իւր կեանքը ապահովէ և մարդկային ընկե- րութեան մէկ անհատը իր տեղը գրաւէ միշտ իր կարգին մէջ, այդ համոզումը մեզ կը տանի այն եզրակացութեան թէ՛ հայ անհատի մէջ պէտք է փնտաել պայ-

ինքնասիրութիւնը կը փայտայնեն, ինչքան ալ վտանգաւոր ըլլան՝ դարձեալ պաշ- տելի են, զգլխից ազդեցութիւն մը կը թողուն և զօրաւոր գիտիլ նման կը գե- նովցեն զայն:

Հայ ժողովուրդը մտքով արթննալէ աւելի՛ արտով արթննալ էր, ուղեղէն աւելի՛ կուրծքը կը գործէր, անոր զգա- ցումին հետ խօսիլը աւելի գիւրդին էր. քան թէ խոհականութեան:

Ազատ երկրի մէջ ապրող մեր երա- նելի ուսանողները շատ ճարպիկ էին սրտի հետ խօսելու և խօսեցան...:

Այդ ալ բաւական չէր: Հասարակա- կան շարժումի մը մէջ հաւաքական ոյժը որքան զօրեղ ըլլայ, անհատներ որքան իրարու քով զան, այնքան կարելիութիւն կայ շուտ իրականացնելու նպատակ մը: Հայութեան մէջ սակայն այդ հաւաքա- կան ոյժը կամ կը պակսէր կամ բաժնու- ած էր. միեւնոյն ատեն շարժման նոր հոսանքի շնորհով ազգային բարձր ձեռ- տումները թէ և արթնցած էին, սակայն չէին զարգացած և իրենց յառաջդիմու- թիւնը կը կատարուէր յեղափոխութենէ նախ, քան իրականացնելու նպատակ մը: Իրենց այդ գրու- թեան մէջ աւելի հոգատար և փափուկ ձեռքերու խնամքին կարօտ էին, և ահա

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՉԵՆ

Հոկտ. 16.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՑՈՑՑԵՐ

Կիրակի օր Ֆրանսայի մէջ կարգ մը տօներ սեղի ունեցան, որոնք ամենքն ալ Հայրենասիրական էին:

Թէ Հիւսիս և թէ Հարաւ Ֆրանսացիք սկսած են ազգային կազմալուծութեան դէմ պայքարել:

Այդ տօներէն Ալպիներ ամենամեծն եղաւ, որուն վրայ շատ խօսուեցաւ, և սակայն ցոյց մ'էր քան տօն մը: Ես մեծ բազմութիւն կար, որոնք պատկանելով զանազան կուսակցութեանց, միացած սակայն իրենց Հայրենասիրական ոգիով, հաւաքուած էին Ալպի մէջ, ուր միջազգային վարդապետութեան կուսակցիներն կը կարծէին թէ ըստ զրոյս ինչ որ միջցոյցն այնքան մեծ կարեւորութիւն ստացած էր, որ անկարելի էր եղեր քաղաքին մէջ տեղ մը գտնել՝ բոլոր ներկայ եղողներն ի մի հաւաքելու: Երեք սեղան պատրաստուած էին. մին հաղար անձի համար, միւսը՝ 650ի և երրորդն՝ 300: Քրտանի չափ երեսփոխաններ Ալպի գնացոր էին ցոյցին ներկայ գտնուելու համար, որը մեծ յարգութիւն ունեցաւ և մեծ ազմուտ հանց ամբողջ Ֆրանսայի մէջ:

Այն Օմէր քաղաքին մէջ ալ Հայրենասիրական տօն մը սեղի ունեցաւ բոլորովն գինուբարկան: Գրոշակ մը տրուեցաւ 300րդ ջոկատին: Այս տօնն ալ իր կարեւորութիւնն ունէր, վասն զի սեղի ունեցաւ Պ. Ռիպոյի նախագահութեամբ, որ սեղի ոյն երեսփոխանն է և նախկին մինիստրը: Անոգուտ է ըսել թէ Պուրպաքի պարագային արձանն, զոր կանգնեցին Փօ քաղաքին մէջ, բուրովին ազգային գոյն մը պիտի տար տօնին: Այդ քաղաքի գինուբարկան, որ Ֆրանսական հին բանակին կատարեալ տիպարն էր, յամենայն արժանի էր այն յարգանաց, զոր իրեն մատուցին կիրակիէ:

Բան մը չմտնալու համար յիշեմք թէ՛ դարձեալ կիրակի օր, Մանչի ահաբեկի Մօնթէպուրի փոքրիկ քաղաքին մէջ կանգնեցին ժանա՛ Արքի մէկ արձանը, զոր ընծայած էր Լը Նարտէզ եպիսկոպոսը: Այս տօնին կը նախագահէր սեղապահ գնդապետն Կէռնը, որ սեղի ոյն երեսփոխանն է:

Այսպէս, հակառակ չարագուշակին

քարի մէջ գործածելիք մեր ոյժը: Ամենքը ալ, ըլլա՛յ արտասահմանի մէջ, ըլլա՛յ Հայրենի երկրին մէջ՝ միևնոյն համոզումով, միևնոյն կարծիքով կը զգանք թէ Հայրենիքն առաւելութիւն մը պակասութեան վտանգը կայ, ստոր համար է որ Հայրենիքը քննադատներու ամբողջութեան իբր հետեանք՝ մենք աւելի բարձրացած, աւելի ինքնաճանաչ և Հայրենի երկրին ու յիշատակներուն աւելի կպած՝ ազգայնութեան հոգեով ու արիւնով լեցուած ետ ու ետի Հայրենիքն մը պիտի տեսնէինք, մինչդեռ իրերու ներկայ կատարեալութեան կը ստաննեք թէ այդ բոլոր քննադատութիւնները, անհասական համոզումներու արտայայտութիւնները չեն այնքան, որքան մեքենական ինքնախօսութիւններ, որոնք ալ աւելի կը մօտեցնեն մեզ վտանգը:

Երբ անհասանքը տուածին առանձին առնելով կ'ուսումնասիրենք, այլոսեռումի նշանները իսկոյն կ'երևին մեր աչքերուն: Տեսնուած բան է թէ աղէտները որքան ալ հոգեկան սազնապնդուող տակ ճշուն մարդս, այնքան աւելի կը փարսի նա իր սիրած գաղափարին և իր բարոյական քաղցրութիւնը երևան կը թերէ: Երբ աղէտը հանուր է, միևնոյն ցուէ ընկածուած, միևնոյն վշտով խոցոտուած սըրսերն կը զարթոնան վրաստան մէջ կը գտնեն իրենց միտքարարութիւնը: Հայ հանրութեան համար, սակայն, կարծես աղէտները իրական ըլլալէ աւելի արտեստական

րու և խռովարարներու, Ֆրանսայի մէջ կողմէն միան Հայրենասիրական եռանդն կը բորբոքի: (*)

A. SAISSY

ՆԱՄԱԿ ՊՈՒՂԱՐՈՒՍԵՆ

Ֆրիլպէ, Հոկտ. 1

«Իրաւունք» լրագրի վերջին թուին մէջ կարգադրելով թղթակցութիւն մը, որ արձագանգ կ'ըլլար մեր ժողովուրդի արդար այն յուզումին, որուն պատճառ դարձած էր յուզեալ մտքերը հանդարտեցնելու նպատակաւ Պատրիարքարանէ զրկուած այցելու հովիւ Բարթոլոմէոս Ծ. վարդապետ Պաղճեան, առաքելցի միջոցին եկեղեցիէն քանի՛ քանի՛ անգամներ ձգել փախելու և Ս. Աստուածածնայ տօնին պատարագ մատուցանելու չի հաճելով:

Ահաւասիկ եկեղեցոյ պաշտօնայ մը որ իր ներկայիս պարտք ու պաշտօնին դէմ կը գործէ, ահաւասիկ խաղաղութեան պաշտօնայ մը, որ ժողովուրդին ու իր եկեղեցիէն դէմ կուր կը ներթէ:

Շատ բնական է որ մենք Ֆրիլպէյի ներս՝ մեծ բաներ չէինք յուսար ալեւոր վարդապետէն, որ Թուրքիայի մէկ դար առաջուայ ամիրայական կղերականութիւնը կը պատկերացնէր ճիշդ ու ճիշդ, և որ ստորինով Հայաստանի ամենէն մտած խորշերուն մէջ մնացած՝ անկարող կըլլար ինչ իր մը զինել բունութեան ու ազգայնութեան սակ հաղուած զարձակ Հայ գիւղացիին և աղաւթիկներու հայրենիքին ընդդէմ: Դասը կը շարունակուի, ինչպէս որ կը շարունակուի միևնոյն աստիճանները որ կար հոս:

Պաղճեան վրէժն շուրջ իր ձեռքերը մօտեցնել մեր սրտի վէրքերը քննելու, նա հեռագրովուրդը ուղղել մեր վէրքերը տեսնել, չգիտնալով որ վէրքը հեռուէն զիտող վիրաբուժի մտախնդի համար ընդ զիտողներէն հիւանդը: Այլ ի՞նչ է մնացել մեզի, երբ ամեն բան կորուսի, ամեն բանէ զրկուեցանք, ներթական ու բարոյական ահաբեկ տագնապներու մատնուեցանք, պատիւ, շահ, զիրք, ապագայ, ամեն բանէ մերկացանք, մեր սրտերը որբերու կոկիծոյթն ու այրիներու աղեկարար վայրեններով սողորուելն ետք՝ մեր եղբայրներէ հալածուեցանք:

(*) Բարիկի լրատու գրասենեակ (Paris-Nouvelles Bureau D'informations) պարբերաբար լուրեր պիտի հաղորդէ մեզ, որմէ քաղելով կը հրատարակենք ներկայ թղթակցութիւնը:

էին: Այդ տխուր երեւոյթը մասնաւորապէս աւելի աչքի կ'ընկայ արտասահմանի մէջ, ուր վտանգիկ սուգէ մը վերջ, որ իբր թէ՛ ձեռակալութեան նման բան մըն էր, Հայրենիքն ուղղուած էր զգացումներուն հակառակ շարժում մը սկսած է: Այդ ազգաբնակչութեան ընթացքը արդարացուցելու փաստերը կանխելու թուրքաբար սերտած, մեղադարձութենէ զերծ մնալու ջանքեր լրացնելու ամենքն ալ առանց բացառութեան կը պարծին թէ՛ իրենք գիտեն թէ ի՞նչ ծրարով բարձրացնելու էր Հայրենիքը: Ահա ծրարներու, ուղղութիւններու, կարծիքներու ու տեսութիւններու այս խառնաձուլումն մէջ Հայրենիքը իրական օգուտ մը չը քաղելէ զատ, անկրօն մը նշաններն ալ բացայայտ են, որովհետեւ անհասարակ բանի միջոցառում, ամեն բանի սխալը տեսնելու յաւանքութիւնը ունենալով միտքին, չէր քանալու զիրքը բունութէ: Յայտնի ու հաւատարմի ներշնչութիւնը զուրկ, քաղաքիարի ու համոզումներու խտացումները քայքայումի ենթարկած, իր հոգեւոյն ու մտքի թռիչներուն դադար տուած, իր ինքնութեան մը հրաշարործ մասնակցութեան մը հրաշարործ մասնակցութեան, որ աստուածային շարժումով մը երջանկութիւնն ու կենքի ապահովութիւնը վերհաստատէ իր Հայրենիքի մէջ, որ ինքը առանց ու է գրեւորութեան վայելելու բարեբաղդութիւնն ունենայ:

Պաղճեանութենէ ու կոտորածէ աւելի անհասարակ անկրօն և այդ հակադիր

Հայու անուն կրող վտանգէ ծեծուեցանք, և երբ մեր վէրքերը ցոյց կուզենք տալ Աւետարանի ու եկեղեցիի պաշտօնէն, նա քայլ մը ետ կերթայ և մեր վէրքերուն մտա անգամ դպցնելու չի զիջանիր:

Այս է եղեր կղերին պաշտօնը... չէ՛ վարդապետ, չէ՛, դուք Հարցուցէք մեր մօտը քանուղ Հայրենիք թէ՛ Արտէն վարդապետ ինչպէ՞ս կը նայէր իր հօտին, Հարցուցէք անոնք թէ ինչպէ՞ս կ'այրէր նա մեզ հետ. կը տանջուէր մեզի հետ. թէ ինչպէ՞ս նա չոր ու ցամաք հացով մը մեր ցաւ ու տանջանքներուն մասնակից և մեր եղբայրներու նահատակութեան միակ վկայն եղեր էր:

Ազգին այս անօրինակ ճշմարտութիւն մէջ Հայը կը պահանջէ իր կղերին ոչ թէ փախուտ, այլ անձնութեան թիւն: Թուրքաբարներու պէտք չունինք. անձնազոհ և քաջարիներ հովիւներու կը կարօտինք:

Դուք եկեղեցիէն կը փախիք, Պատրիարքի աչքէն շինալու և հացէ չըզրկուելու համար: Արտէն վարդապետ ի՞նչ ընէր, որ նոյն այդ Պատրիարքի հրամանով չորս պատեան մէջ բանասարկուէր էր, կուսակցամուլ հակառակորդներ կ'արգելէին անոր եկեղեցի մտնելը. և երբ օր մը Ֆրիլպէի Հայրենիքը իր սիրած վարդապետին դէմ եղած այս անձն անօրինութիւնները տեսնելով զայրացած՝ հրաւէր կարգաց անոր եկեղեցի մտնել, փախուտ չի տուաւ եկեղեցիէն, այլ՝ հաւատարմ և Հայրենիքի արիւնարուութեան թշնամիներու զէնքերուն մէջէն կուրծքը բաց՝ ու խաչը ձեռքը մատու եկեղեցիէն ու հոն քարոզել:

Եւ հիմակ ինչպէ՞ս չը յիշեմ Արտէն վարդապետը, անոր կայսրու ու երիտասարդական կորովը, ինչպէ՞ս չը յիշեմ անոր քարոզները, որոնք զգայուն սրտերուն արձագանքն էին:

«Հայրենի հողին վրայ անշնչացած Հարիւր հազարաւոր նահատակները, անմիտիտար սուգի մէջ մնացած այրիները, բանասեր մէջ անտեսելի բռնութեան մատնուած մեր Հայաստանը եղբայրները միայն մէկ բան կ'աղերեսնէին՝ զի ի՞նչ ար սիրելի: Այս էր իր քարոզը, և ժողովուրդը, որ կուգար սիրու և խաղաղութեան պաշտօնէն հոգեւոր խօսքերը լսելու, հոգեկան զորաւոր ու վսեմ ազգեցութեան մը սակ՝ կը հեռանար եկեղեցիէն:

Ենթինք թէ Արտէն վարդապետը Ամերիկայի թեմերէն մէկուն հովիւ ընտրուած է, ուրբայ նեք այս յաջող ընտրութեան առթիւ, որովհետեւ սա այն հազարազարտ հովիւներէն է, որոնք գիտեն իրենց պաշտօնի կոչումը:

ՈՒՐՈՒՐ

շարժումին մէջ պէտք է փնտռել Հայ ազգի կորուստը:

Ամերիկայի գաղթականութիւնը ազգային ամեն կարգի շարժման մէջ, ըլլա՛յ այն քաղաքական, ըլլա՛յ մասնաւորական ու բարոյական, մեծ դեր ունէր կատարելիք և այն այդ դերը կամայական ըլլալէ աւելի պարտաւորել էր:

Ամենքս ալ պէտք է խոտովանինք թէ գաղթականութեան այս նոր հոսանքը, ինչպէս հին գաղթականութիւնները, աւելի շահախնդրութենէ մղուած էր, քան քաղաքակրթութեան բարձր տեսնէն, բայց և այնպէս այդ շարժումը աւելի պատիւ խառնութիւն էր քան գաղթականութիւնը, քանի որ ասան վաստակող ձեռքէր էր միայն որ կը մեկնէր, ընտանիքը թողնուած Հայրենի երկրին մէջ. ուստի այդ կողմէն Հայրենիքն սպառնացող կորուստը այնքան վտանգաւոր չէր երևանար: Սա ևս նկատուողութեան տանելու արժանի է, որ պատեալութեան գրեթէ առհասարակ երիտասարդ էր, հեռուապէս ամեն կերպով ընդունակ իրարացնելու լուսաւորեալ աշխարհի բարի սովորութիւնները, իր միտքը ամբարնելու քաղաքակրթութեան աստու պաշարով: Միջկայրն ալ մասնաւորապէս այնքան անկապտ չէր: Այն երիտասարդը, որ դրամ ու փամանակ կը գտնէր իր մարմնական ամեն հանձնարար լինելու կատարելու, կարող էր նոյն դրամը գտնել և իր բարձր տեսնէնքները իրականացնելով իր հոգեւոր քաղցր յարգուող տալու: Բռնապետական կաշկանդիչ ձեռք մը չկար այլևս:

ՄԱՅՆ ԱՌՕՍԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԿՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալ գրքերը:

ՆԵՐՇՆՁՈՄՄՆԵՐ ազգային և յեղափոխական արդի կենսութիւն:

Հեղինակ՝ Պերճ (Մ. Տամատեան). Փահիրէ, Վիմասպարան Մնտիկեան եղբայրք. 1899:

116 երկնորէ բաղկացեալ ստանուորների հաւաքածոյ մըն է: Ներշնչումներ հայրենիքի ցաւին, ստատականքին, յայտնի ու հաւատարմին, ներշնչում ազատութեան ձգտող աշխիւ սրտին: Հայուն ներշնչումն է ան, զոր հեղինակը կրած ու արտայայտած է Հայաստանի սարէն ու ձորէն, Հայրենիքի սրտէն: Իրաւամբ կոչուեցաւ այս գրքոյիչը նոր Համով Հատով. անկեղծ զգացման ու պարզ արտայայտութեան համ ու հոս կուտայ Պերճի ներշնչումներու փունջը, և յեղափոխական կենսութեան կը ցոյցայնէ:

Այս անգամ կ'արտատպենք «Չուրկուեցաւ կը փախուց», որ մեր գործնական յեղափոխական պատմութեան առաջին էջն է:

Ներշնչումները շատով պիտի ստացուի և վաճառուի խմբագրութեան քով: Գին 25 օնցնի:

Առ ձեռն Ամերիկեան ԲԱՌՄԱՆ, անգլիկէնէ Հայրենիք. աշխատասիր Պետրոս Ռ. Թորոսեան: Երև. Երբք: Տպ. Էլիաս Խաթաբ և Ընկ. 1899. էջ 360:

Պրն. Պ. Ռ. Թորոսեան, որ արդէն ծանօթ է իր «Պատանի Գիտելիքներ» և «Ինքնուսուցիչ» գրքերով, այժմ երրորդ աշխատասիրութիւն մ'ալ կը ներկայացնէ, որ կը գերազանցէ առաջինները. եւ արդէն ինչպէս ինքը կը գրէ՝ ներկայ բուսական «Ինքնուսուցիչ» լրացուցիչն և Բ. մասը կը կազմէ: Կը պարունակէ 25,000էն աւելի բառեր:

«Ուրիշ մեծ մատնագրի կարելի է դրուատիքի փափակել, բայց բառարան յորինողներուն՝ շատ է եթէ մինչ իսկ եպիստոմքէ գերծ մնան», կըսէ Անտրիէյ, բայց Պր. Թորոսեանի «Բառարան» որ յարասն աշխատութեան և լոկ անհասարական ջանքերով ու զոհողութեամբ մեր գրասեղանին վրայ կը դնէ, դրուատանաց արժանի է: Ամերիկայի Հայ գաղութի մտաւորականը ինկատի ունենալով՝ ցարձ հրատարակուած բառարաններէն գործա-

թուրքին սարտափը բացակայ էր. ամենէն շատը քանն և հինգ տարուան գաղթականութիւն մըն էր այն և կարող էր լեցուն քաղով և թէ լեցուն գլխով դառնալ իր ծննդավայրը, ուր աւելի պէտքը կըզգացուէր աչք պիտիներուն:

Տխուր խոտովանութիւն, բայց ճշմարտութիւնը ըսելու հարկին տակ կը գտնուինք, երբ շեշտեք թէ՛ Հայ դաւաղութիւնը շատ աննախ կերպով արդարացուց իր վրայ դրուած յարցը:

Վերջի տխուր դէպքերէն յետոյ Հակագործունէութեան շարժումը սկսաւ և հոս. երևան եկաւ որ մինչև իսկ անոնք, որոնք ցոյց կուտային թէ հազուով ու սարմուխ նուիրուած էին քաղաքակրթեալ Հայրենիքն մը վերականգնելու թանկ գործին, առերևոյթ և ձեռնկան ձգտումներով սքողեալ էին: Բննադատներու լէզուէն մը երևան եկաւ, որ ամեն կարգի կազմակերպութեան դէմ բողոքող էր, իսկ ինքը ոչ գոյն ունէր. և ոչ ուղղութիւն. Համար էին միայն իր ամեն բարձրանքները: Կայծերն սկսան մարիլ, հոգի սկսաւ թուրալ իր ձգտումներուն մէջ, յուսահատութեան սխուր արտայայտութիւններ սկսան վայելլ զէմքը վրայ վրայ, սիրտը իր ազնիւ զգացումները կորնցնելու վտանգին ենթարկուեցաւ և բարոյական անկուծը սկսաւ: Հիմակ ալ այդ գործները ցոյց կուտան թէ այստեսուած, ազգերու գոյութեան սպառնացող այդ մեծ վտանգը, ամերիկահայ գաղ-

ճուրջան էն յարմարագոյնն է: Նշանակելի առաւելութիւն մ'ունի ուրիշ բարարաններէ, որոնց նշանակութիւնը խորհրդած են երրորդական, շորրորդական բացատրութիւններով, որոնք շատ մեծ շնորհակալութիւն կը պատճառեն բառարանի գործածութեան անվարժներու և լեզուներ սոր սովորել սկսողներուն: Հոս իւրաքանչիւր բառին դէմ գրուած է մէկ կամ երկու բառ, եւ շատ անգամ ինկատի ունենալով որ կրնան գրական բառեր շնորհակալութիւն մէջ գրուած է ռուսական լեզուի, փակագծի մէջ գրուած է անգլիական նշանակութիւնը: Արտասանութեանց մասին ալ բնաւ հետեւած չէ՛ հայերէն ուրիշ բառարաններու, այլ ջանացած է որքան հնարաւոր է՝ ճշգրիտ հայերէն արտասանութիւնը:

Եթէ կարելի է պակաս համարել, այն է որ բաց թողուած են յատուկ անունները, կենդանական ու բուսական բառերը, ինկատի ունենալով որ ասոնք բնաւ պէտք չեն գար մեծամասնութեան մը եւ թէ անոնց հայերէն բառերը աւելի անհասկանալի են քան անգլիերէնը: Թէ և նկատելի է որ այդպիսի բառերուն պէտք պիտի զգայ թարգմանիչ մը: Բայց մենք մեզի թոյլ չենք տար յոտանջանալ քննադատութեան մէջ, որով իրաւունք պիտի տանք աշխատասիրողին մեզ ուղղելու: Ֆրանսիական առածը՝ «արուեստը գիտար է, իսկ քննադատութիւնը գիւրիւն»:

Կ'արժէ որ բառարանի պէտք ունեցողները ներկայ նոր աշխատութիւնն ունենան իրենց սեղանի վրայ, վստահ ըլլալով թէ իրենց պէտք պիտի լրացնէ:

Գիրք 23 տարի: Դիմել առ B. R. Torossian, 564 Clinton Ave. West Hoboken, N. J. Կը վաճառուի նաև խմբագրութեանս քով:

ՆՈՐ ԸՍԵՐՑՄԱՐԱՆ, Ա. Տարի. կազմեց Թ. Գ. Պոնոմարեան: Վառնա. տպ. Գնչո Նիգուրի. 1899:

Մանկավարժական հմուտ աշխատասիրութիւն մ'է, որ վստահաբար կարելի է մանուկի ձեռք տալ: Իրագրութեան ուղղութեամբ պատրաստուած է, պարզ ու սիրուն մանկական ոտանուորներով համեմատած, և ազդեցին պատմութեան կտորները դերբարձրները կերպով մը դասաւորուած:

Գին 60 անդրիմ (12 սէնթ): Դիմել աշխատասիրողին: H. G. BONDJOUKIAN, Varna, Bulgarie

Թականութեան շէմքին վրայ է: Բայց ուշ չէ: Հայութիւնը իր ընտանիքի մէկ մեծ մասէն չը զրկելու համար՝ հարկաւոր է որ ամբողջ հայութեան հետ նա ալ շարժի: Անոր գիտակից երկատարութիւնը այդ շարժման դրօշակակիրը հանդիսանայ և անոր մէջ վերակենդանացնէ ոգևորութիւնը:

Ամերիկահայը թո՛ղ շարժի և ծնունդ տայ այն երկատարող, անձնուէր և բարոյական առաքելութիւններով օժտուած գործիչներուն, որոնք հայութեան սիրտը պիտի ազնուացնեն, հայութիւնը պիտի բարձրացնեն իր անկումէն և որոնց՝ հայութիւնը ամեն ժամանակէ աւելի հիմա է որ պէտք ունի:

Ամերիկահայը թո՛ղ շարժի և թո՛ւթ ուէ իր բարոյական թուլութիւնը, և թող աշխատի լուսաւորեալ աշխարհի ճրագը տանի հայութեան խաւար խորհերուն մէջ:

Թո՛ղ շարժի ամերիկահայը եւ իւր հոգեւոյն թող ազատ ասպարէզ տայ աւելի բարձր թո՛ւրջներով թռելու, և այդ բարձր թռիչքի գէ՛թ թեւաբախտները թող տանի իր աչքին:

Թո՛ղ շարժի ամերիկահայը ամեն կերպով, սրտով, հոգեւով, մտքով և այն ամեն բարձր ձգտումներով, որոնք ցեղական յասկակութիւնները կ'ազնուացնեն: Թո՛ղ շարժի ամերիկահայը, թո՛ղ շարժի հայութիւնը, որովհետեւ շարժումը կենսի է, եւ կենսից շարժում: Ս. ՍՈՒՐԵՆ (ՎԵՐՁ)

ՉՈՒՆ ԿԵՏՈՒԿԻ ԿՈՒՒՐԸ

Պաշտօնէի լիարանց մէջ տեղի ունեցող Չոու կըրճին մէջ մեծ և շքեղ Մի տեսարան է պարզուեր: Ելէ՛ք տեսէ՛ք, Հայոց քաջներ:

Անդ կանգնիք է Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան:

Քրտան և մէկ տարու զեռ նոր, Դէմքը քաջի, քալածքը սէգ, Սըրտովն առիւծ, բազկաւ հզօր, Դեռաբուսիկ մօրուսին տէգը:

Անդ կանգնիք է Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան:

Հրացան ուսին, ձեռքը նիզակ, Անքէն ցատկէ կըրակ ու բոց:

Վարժպետ երբեմն, այժմ աւազակ, Իւր շուրջ կան եօթն այլ քաջը Հայոց:

Անդ կանգնիք է Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան:

Ինքն և եօթնեակ իւր քաջ ընկերք Բարձր և ն վանցի կողերք:

Հայրենիքին ուխտ են կապտար Իրենց արիւն աւլ ի նըւէր:

Կեցցեն ընկերք Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան:

Ազատասէր այս նոր խմբակ վանէն շէ ֆիթեան զան և զընան:

Չարենն սպանեն թուրք բուրք վայրագ, Վրէժ հանեն ճընգադարեան:

Կեցցեն քաջեր Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան:

Ինչ որ խօսի այս հրոսապետ, Ինչ որ քըբէ յիւր Օրագիր, Հայոցս համար են փըրկուէտ՝ Թէ արկաններ զանոնք ի կիր:

Ահա խօսի Ագրիպասեան, Ուրախ լուրեր տարէք ի վան: ՊԵՐՁ

(Շարունակելի)

Ո՞՞Ր ԵՆ ՉՈՐՍ ՈՐԲՈՒՂԻՆԵՐԸ

Հոկտեմբեր 4 Չորեքշաբթի առուր տեղական թերթերու մէջ կարգացի հետեւեալ տողերը: «Չորս հայ որբուհիներ հասած են Քէյսլ-Կարտըն, որոնց ճանապարհածախսը վճարուած չը լինելով, և մինչև ցարդ զիրենք պաշտպանող ո՛ր է մէկը երևան կ'առ շլինելով՝ Պարծ-Օֆիսի կողմանէ առժամանակ կերպով գրուած են Մէթոսթի Էփիսոփոսով պատասպարանի մէջ, ի թիւ 9 State St. և եթէ մինչեւ Շարաթ օր իրենց համար երաշխաւորող մը չգտնուի, զիրենք բերող շոգենաւով ետ պիտի զրկուին: Սոյն որբերէն ամենէն մեծը 10-11 տարեկան է, և ամենէն փոքը հինգ տարեկան»:

Սորհելով թէ այն թշուառ մանկիկները բազմին ձեռքն ինչապով մինչև հոս նետուած էին, եւ չունէին մէկը, որ տիրութիւն ընէր իրենց, որչեպի նախ զիրենք տեսնել, եղևուրթեան տեղեկանալ եւ տպա խորհրլ թէ ի՞նչ եղանակաւ կարող կը լինիմ օգնել:

Լրագիրը ձեռքիմ՝ փութացի վերոնըջանակեալ հասցէին, ուր ի տես այդ անմեղ, բայց բողբոջ ձեռք խաղալիք դարձած փոքրիկներուն՝ չի կրցի յուզումս զսպել, և աչքերէս հոտող արտասուքը յուզեցին նաեւ այդ զժբաղդներու սիրտը:

Սոյն շորս որբուհիներէն ամենէն մեծը Աննա Թէրզեան Տիգրանակերտցի 11 տարեկան, ըսաւ թէ՛ զիրենք բերել տուած է Տիկ. Եսթեր Բէշլիշեան, եւ նոյն պատասպարանի Տեսուհի տիկինը իմացուց թէ որբերու պաշտպան տիկինը դուրս ելած լինելով՝ քանի մը վայրկեանէն պիտի վերադառնար: Ուստի յարմար դատեցի սպասել և տեսնել թէ ո՞վ էր տիկին Բէշլիշեան, եւ սկսայ զրկել իրենց անունները, գուցէ մի օր պէտք կը լինի խորհրդով:

Ա. ք. Աննա Թէրզեան, հօրեղբայր մը ունի Ուէսթ Չոպօքնի մէջ Յակոբ Թէրզեան անունով: Բ. ք. Պօլսեցի ազնիւ Միլքոնեան 7 տարեկան: Գ. ք. ասոր քոյրը Լուիզա Մելքոնեան 5 տարեկան: Դ. ք. Բիլիոցի (Ա. յիթալ) Միհրանուշ Սուրթանեան, 6 տարեկան:

Սոյն որբուհիները երբեմն կը մնան եզեր կիրպոսի որբանոցին մէջ, որն բաց-

ուած է Միտիօմարայ ձեռքով: սակայն քիչ յետոյ պաշտօնէից մէջ անդի ունեցած զեղծումներու պատճառաւ գոցուած լինելով՝ բոլոր որբուհիները ցրուած էին: Տիկ. Եսթեր Բէշլիշեան այդ որբանոցի մէջ վարժուհի լինելով ծանօթ է եղեր սոյն որբուհիներու մայրերուն հետ, և խոստացած որ երբ ինքն Ամերիկա հասնելով իր գործերը կարգի դնէ, անոնց զաւակներն բերել ստով՝ իր զաւակներուն պէս խնամէ մեծցունէ:


Քիչ յետոյ ներս եկան Տիկ. Բէշլիշեան և իւր ամերիկացի բարեկամուհին, զոր ինձ ծանօթացուց Տիկ. Մաթիուս անունով, և ըսաւ թէ սոյն տիկինը խոստացած է օգնել ինձ, որ այս որբուհիները կարենամ պահել, և զեռ շատ մը երէցներ ալ պիտի օգնեն ինձ, որ ես կարող լինիմ դեռ 10-15 որբուհիներ ևս բերել տալ:

Տիկ. Բէշլիշեան առաջին անգամ պատէ պատ զարնուեցաւ, ամեն ճիգ թափեց, որպէս զի այդ որբուհիներ իր ճանկին մէջ ունենայ. բայց երբ իր կապտակին չհասաւ, թողուց որբուհիները եւ Պրիմփօրթ գնաց: Որբուհիները ո՛ր մը նացին, ի՞նչ պիտի ըլլար անոնց վիճակը, որո՞ւ խնամոց պիտի յանձնուէին, շոգենուած ո՛ր պիտի տանէր զանոնք, մինչեւ կիրպոս կամ Եփիսոփոս ի՞նչ միջոցով պիտի երթային, և անոնց փողոցները մնացած ատեն անոնց լալիւններու ձայնը ո՞վ պիտի լսէր:

Ասոնց ամենուն միակ և կարճ պատասխանն է թէ՛ այդ որբուհիները արդէն շոգենուած մէջ մեռնելով մէկիկ մէկիկ ովկիրանով մէջ պիտի մեռնուէին: Եւ սակայն ո՞վ էր այդ անմեղ էակներու հոգեւոյն և կենաց պատասխանատու առաջի Ստուծոյ, և առաջի աղբիւն մանուկը: Անշուշտ՝ տիկին Եսթեր Բէշլիշեան և իւր ... բարեկամները:

Բայց, ազնիւ ընթերցող, թող քո սիրտը հանդարտի և խիղճը մաքուր մընայ. այդ վերջին՝ բայց նախական պարտաւորութիւնը մենք կատարեցինք. անձամբ այդ շորս սիրուն զաւակները մեր իսկ ձեռամբ զաղղիտակուն շոգենակին բաւական կոկիկ մի սենեկին մէջ տեղաւորեցինք, և յանձնեցինք զանոնք բարեբողջաբար նոյն օր մեկնող մի քանի ազնիւ հայ կրիստոսարդներու, որոնք մեռնայն սիրով խոստացան բնաւ անխնամ չթողուլ զիրենք և անպատճառ նստակաւ տեղեկացունել ինձ իրենց անվտանգ հասնելն իցամաք:

ՍՈՒՐ ԿՍՐԴԱՊԵՏ



ՊԱՏԵՐԵՍՄ

Ի՞նչ է և ո՞ր կերթայ պատերազմական կացութիւնը հարաւ Աֆրիկէի մէջ, Ամենէն առաջ պարտինք ըսել թէ անցեալ շաբթուան հայերէն թերթի մը մէջ երեւցած տեսութիւնը թէ իրր՝ Չորս Հուսայթի և Պօլսեցի ներկայ բանակներուն մէջ մղուած պատերազմը երկու ազգաց ճակատագիրը պիտի որոշէ, ողորմելի կերպով սխալ է:

Նախ. որովհետեւ Անգլիական պատերազմը չվերջանար՝ եթէ նոյն իսկ Չորս Հուսայթի ամբողջ բանակը չբանայ, ուրովհետեւ Չորս. Պոլսը իրը ընդհանուր հրամանատար լիսգօր իշխանութիւնով և 90,000 զօրաց ահազին բանակովը հարաւ Աֆրիկէի ցամաքին մօտէ, և մէկ երկու օրէն իր արշաւանքը պիտի սկսի. նաև Անգլիոյ պատերազմական նախարարութիւնը պահանջարկ զօրաց զէնքի տակ զանոնք կոչուում մը ըրաւ, և մէկ կողմէն նորանոր զօրագունդեր կը զրկուին Չորս. Պոլսին, որը իմօտոյ 150,000 ի շափ զօրք պիտի ունենայ. ուրեմն պատերազմը իսկապէս նոր պիտի սկսի: Երկրորդ. եթէ Անգլիա պարտուի իսկ Պօլսեցիէն և հարաւ Աֆրիկէն ձգելով ետ քաշուի, մի՞թէ աստով Անգլիոյ ճակատագիրը կ'որոշուի մի՞թէ պօլսեցիները պիտի արշաւեն Մեծ ին Բրիտանիոյ կայսրութեան վրայ և անոր տիրեն: Բանաւոր կըլլաւ ըսել թէ՛ եթէ Անգլիա յաղթէ, հարաւ Աֆրիկէի ճակատագիրը պիտի որոշուի, ամբողջութեամբ Անգլիական կառուածք դառնալով:

Չորս Հուսայթ մեր անցեալ թուով ծանուցած ծանր կորուստը կրելով ամփոփուեցաւ Լէյթիամիթի մէջ, անցեալ ուրբաթ օրէն իվեր շատ կատաղի ճակատամարտեր կ'այն երկու բանակներուն մէջ: Պօլսեցի ուժը գերակշիռ է. անոնք ունին նաև խիտ հսկայ թիվ մանուկներ: Չորս Հուսայթի օգնութեան գացին անգլիական մարտունակ երեսուցներ, որոնք իրենց երկար ու խոշոր թիվով անօթները յարմար կետերու վրայ գեանդելով ահուկի ջարդեր յաւաջ բերին թշնամի բանակին մէջ, որոնց արձակած պայթուցիկ առամբներուն պատճառաւ ահուկի արարքներուն գէ՛մ Չորս Հուսայթի զբաւոր բողբոջ մը զրկեց Պօլսեցիներէ: Հրամանատար Չորս. Չուպերթը: Անգլիացիները երբեմն իրենց պաշտպանողական զիբքերէն դուրս եկան, յարձակեցան պօլսեցիներուն գրուած ազգագրատական խիտ կարեւոր դիրքի մը վրայ. իրենց սուրներովը անկէ ցիրուցան ըրին թշնամին և անոր ստակալի ջարդ մը տալէ զատ 2000 հոգի գերի առին ու զիրքը գրաւեցին:

Երբեմն շատ ձախող լուրեր կը հասնին Չորս Հուսայթի բանակի մասին թէ՛ զօրավարը մահացու կերպով վիրաւորուել և բանակը անձնատուր եղերէ, թէ անոր ազգամայրերը հատեր է ևն. ևն. իսկ այդ ամենէն ետք լուր կ'ազգայ թէ անգլիացիք շատ լաւ կերպով պաշտպանուած են և թէ Պօլսեցիներուն աղէկ ջարդ կուտան:

Այժմ ամենէն կարեւոր խնդիրը Չորս. Պոլսի բունելիք ընթացքին վրայ է: Ոմանք կը կարծեն թէ անոր զօրաց ցամաքը ելելու ատեն Պօլսեցի ուժագին ընդիմութիւններ պիտի ընեն, թէ վերջիններս խիտ վտանգաւոր թակարդներ լարած են անոնց առջև, միւս կողմէն կը վստահացուի թէ, եթէ յիշեալ ընդիմութիւնները սեղի ունենան իսկ. Անգլ. բանակը ամենայն ապահովութեամբ ցամաք պիտի ելլէ, Անգլ. մարտասուներին թշնամուց վրայ արձակուած առամբներու տեղատարափին տակէն:

Կը խորհուի թէ Չորս. Պոլսը առանց Չորս Հուսայթի օգնութեան փութալու, անմիջապէս պիտի արշաւէ Օրէնձ Ազատ նահանգներու և Թրանսփալի վրայ, որ ատեն Լէյթիամիթը պաշարող Պօլսեցիներ ահազ բանակին մեծ մասը ետ պիտի դառնայ հայրենիքը պաշտպանելու համար Չորս. Պոլսըի դէմ կուտելու:

Վերջին պահուս լուր կուգայ թէ Նաթալի զանազան անգլ. զօրագունդեր կը ճամբորդեն դէպի Լէյթիամիթ, որոյ մէջ է նաև թագուհու թոռը:

Կըսուի թէ Լէյթիամիթը շորս կողմէն պաշարուած է, և թէ Պօլսեցիներ Լէյթիամիթի ետեւէն կամուրջներ պիտի խորտակեն և երկաթուղիները քանդեն, որպէս զի անոր օգնութեան գացող զօրքերը արգիլուին կամ ուշանան:

Անգլ. փոքրիկ բանակ մ'ալ պաշարուած է Քէյսլիք քաղաքին մէջ, ուր \$ 600 միլիոն արժողութեամբ աղամանդ կայ և ուր կը գտնուի Լօրտ Սալուպերի մէկ որդին:

Միշտ զօրաւոր կերպով հաւաստուած է թէ Քէյսլիքն ապահով է, թէ կարելի չէ որ անձնատուր ըլլայ, և թէ քաղաքին մէջ ինքնավստահօրէն ամեն օր խնճոյքներ սեղի կուտենան:

Այսու ամենայնիւ Անգլիոյ ներկայ կացութիւնը հարաւ. Աֆրիկէի մէջ բաւական մտահոգութիւն կը պատճառէ Լօնտոնի մէջ:

Վախ կայ որ Ջուլուները և գուցէ հարաւ. Աֆրիկէի բոլոր ցեղերը Անգլիոյ դէմ զէնք բարձրացունեն. սակայն այս պարագան մեծ կախում ունի Չորս. Պոլսըի առաջին յաղուութիւններէն կամ անյաղուութիւններէն:

Հարաւ. Աֆրիկէ ցամաք ելլող անգլիական բազում զօրագունդերու մէջ կայ նաև 530 հոգիէ բաղկացած թիւղանօթաձիգ գունդ մը ARMENIAN (ԱՐՄԵՆԵԱՆ) անունով: ՉԻՆԱՍՍԱՆ

Չինաստանի բաց դուռի քաղաքականութիւնը պաշտպանելու համաձայնութիւն մը գոյացրէ Անգլիոյ, Ամերիկայի ու Չինաստանի միջև, որոյ մտերաւ-

մասնութիւնը գծելու վրայ են երեք կառավարութիւնները:

ՎԵՆԵՉՈՒՆԷՆԻԱ

Վենեզուէլայի մէջ նոր յեղափոխութիւն մը ծագել է, յաղթանակը սանող յեղափոխականներուն ընդդէմ:

ՕՐԷՆՃ ԱՋԱՏ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Օրէնճ ազատ նահանգներու մէջ ներկայ կառավարութեան դէմ, որ միացաւ թրանսվալի հետ Անգլիոյ դէմ, ապրտամբութիւն մը կը ծագի նախկին նախագահին առջնորդութեամբ, նպատակաւ որ Անգլիա Ազատ նահանգներու անկախութեանը ապահովութիւն խոստանայ և իրենք թրանսվալիին օգնելէ ետք ազուին:

ՊՈԼՍՈՅ ՎՐԱՅ ԽԱՂ ՄԸ

Ռուս և Ֆրանսական կառավարութիւնները գաղտնի համաձայնութիւնով մը որոշել են իւրաքանչիւրը մէկ մէկ ծովակալով մարտանակել զիկեւ Պոլիս Սուլթանը ողջունելու, այս բանը կիմանայ պարսկ Քրիտանական դեսպանը և կերթայ կրպակով Սուլթանին, թէ եթէ այդ բանը պատահի, ինքը պիտի ստիպուի հեռագրել Լոնտոն որ անգլիական մարտանակները խոստմը մը անմիջապէս Պոլիս գայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի Նիւ Եորքի ազատ լսարանի վարչութեան ընտրութիւն կատարելով, Տիկին Ե. Ղիւրմիզ, Տիկին Սարկաւազեան, Վ. Շահէնի, Յ. Մարկոսեան, Կ. Գնդուլի, Ա. Թագուրեան, և Ա. Սուրէնեան ընտրուեցան:

ՀՕՎԷԼԷՆ — Կ. Գուրգէն կը հաղորդէ որ հոն հոկտ. 29 կիրակի տեղի է ունեցեր Հինգիսան Ազգ. կուսակցութեան հրապարակալին ժողովը, ուր ասեմախօսած է բրօք. Յ. Կարապետեան որ շատ լաւ ապահովութիւն է գործեր ժողովրդի վրայ, ասեմախօսած են նաև Ա. Տամկաճեան Ս. Մալէ-Ճալեան:

ՖիՉՊՐԿԷՆ — Ս. Տ. կը գրէ անցեալ տարի հոկտ. վերջեր Պ. Կ. Թաճեանի 19 տարեկան որդին Պողոսը իր հորմէն խոյս տալով Պոստոնի մէջ փոքր յանցանքով մը 11 ամիս բանտարկութեան դատաւարուեցաւ: Եւ երբ երկու օր մնացած էր իր ազատութեան հոկ. 24 ին անապարտներ մը պատճառով 16 օտք բարձրութենէ մը ինչպիսի հոգին կաւանդէ ի սուգ համակերպ իր ծնողքն ու բարեկամները:

Բաթրընի Հայ գաղթականական միութեան լսարանի մէջ յառաջիկայ կիրակի պիտի խօսի Պ. Վ. Շահէնի նիւթ ունենալով «Հայն ու իր գարաւոր թշնամին»:

Նիւ Եորքի ազատ լսարանի մէջ վաղը պիտի խօսի Պ. Ս. Սուրէնեան:

ՆԱՀԱՏԱԿԱՅ ԹԻՇԱՏԱԿԸ

Անցեալ կիրակի Նիւ Եորքի Հայ Աւետ. եկեղեցին տօնեց Հայ մարտիրոսաց յիշատակը: Բնմը զարգարուած էր ծաղիկներով. խոսան բազմութիւնով ներկայէր Արժ. պատ. Ալլէն խօսեցաւ յիշատակի քարոզը և Հայաշունչ ողբով բացատրեց Հայ նահ. տակութեան պատճառը. ներկայից ամենքն ալ խանդավառ զոհունակութեամբ լեցուեցան: Ի մօտայ այս քարոզը լոյս պիտի տեսնէ Չայն Հայրենեացի մէջ:

ԱՋԴ

Յառաջիկայ կիրակի (Նոյ. 12) Պոստոն Հայ-Աւետարանականներու աղօթատեղիին մէջ, (14 Beacon St.) մարտիրոսներու յիշատակի միացեալ պաշտամունքը պիտի կատարուի: պիտի խօսին Հայ գաղութիւն երկու Արժ. Հովիւները, Մաշթոց վարդապետ և Յ. Գ. Սանդիկեան Նրէք: Սրահը ծաղիկներով պիտի սզաւարդուի և մանաւանդ կամաւորներ պիտի երգեն պաշտամունքին յատուկ երգերը: Պոստոնի և բոլոր շրջակայներու Հայերը սիրով կը հրաւիրուին:

ԱՋԴ

Յառաջիկայ կիրակի առաւօտ (Նոյ. 12) Նիւ Եորքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Հովիւ պիտի քարոզէ Ս. Ոսկերեանի յիշատակի քարոզը, անոր կեանքին և Հայաստանեայց եկեղեցիներու հետ ունեցած յարաբերութիւններուն վրայ բացատրութիւններ տալով: Ամեն Հայ կը հրաւիրուի:

ԿԱՐՆԻՈՐ ԱՋԴ

Հ. Ե. Թանգարանի Միութեան 10րդ շրջանի անդամակցութիւնը բացուած է: Ուրախ ենք յայտարարելու որ սոյն Գրադարանը վերջերս չափազանց ճոխացած է, թէ այլ և այլ օգտակար գրքերով և թէ բազմատեսակ թերթերով:

Ամեն ճաշակի յարմար ընթերցանութեան գրքեր և թերթեր միշտ արամադրելի են:

Չէրք փափաքէր տարեկան միայն մէկ տարի վճարելով անդամակցել սոյն բազմօգուտ կազմակերպութեան և ամբողջ տարի մը ձեր միտքը բնօրինակու հասնողը վայելի:

Թանգարանը բաց է ամեն Գշ. Եշ. Ծր. գիշերները ժամը 8—10, իսկ կիրակիները 1—5:

Շնորհիւ սոյն բարեկարգութեան և կարգուսարքին, որ մուտ գտան վերջերս թանգարանին մէջ, ընթերցողներու թիւը հետզհետէ կը բարձրանայ:

Առատ ընթերցանութեան նիւթ, յարմար ժամագրավայր, ծայրայեղ կարգապահութիւն:

Այցելեցէք անգամ մը և համոզուեցէք: 145 E. 23րդ փողոց: ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱՋԴ

Չայնական երաժշտութիւնը մեր մէջ ալ տարածուեցաւ փափաքանօք, հրաւէր կը կարգւած մեր երկուս ազգայնաց ամեն անոնց, որք ձայն ունին և տրամադրութիւն, որ բարեհաճին իրենց անունն ու հասցէն հարգելով ստորագրելու:

Երբ ստանամ 25 ի չափ անուններ, պիտի հրատարակուի զիրենք ինքս, և ընդհանուր որոշմամբ և կարող վարպետի մը առաջնորդութեամբ, պիտի սկսինք կանոնաւոր դասերու:

Հայկական վարժ երգեցիկ խումբ մը ունենալու օգուտներուն, երգեցողութեան ուղիքի ազգի առաւելութեանց եւ քաղաքակրթութեան մէջ բնած զիրքին նկատմամբ աւելորդ կը համարիմ խօսիլ: ՇԻՂԷՐԻ ՍԱ ՍՍՈՐԵՐԸ կը բաւեն:

«ՉԱՐ ՄՍՏՐԴԿ ԵՐԳ ԶՈՒՆԻՆ»
ՏՕՔԹ. ՅՈՎՀ. ԱՐՇԱԿՈՒՆԻ
373 Lexington Ave. N. Y.

ԱՋԴ

ԸՆՏԻՐ ՊՈՒՂՂՈՒՐ

Ուսուցիչի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլիտիքի գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցործին կը պատրաստենք ընտիր պուլիտիք, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններով տանտիրիներու և ճարտարագիտութեան գործարաններու արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ձեւած և կորկոս:

Ուսարի ամեն ով որ կուզէ ընտիր և ակտիվացած կերակուր ինչպէս պուլիտիք և ձեւած ունենալ, թող զիմէ ուղղակի մեզ: Ապսպրանքներ փութով կը կատարուին. մանրամասն անդեկութեանց համար պէտք է գիմել հետեալ հասցէին:

Ուսուցիչ, Պուլիտիքի Միացեալ Ընկ. 151 Իւնիքըն սթ., Ուսթըր Մասս. Տաճկական սեսակ սեսակ ապրանքներ ալ կը ծախենք:

ՄՍՐԹԻՆ ԳԻՆՕ ՀԱՅ

Վաճառանոց տնական ամեն կարգի կահ կարասեաց:
Հայերը ասիկ պատշաճապոյ տեղ չեն կրնար գտնել գնելու, մահճակալ, մեթրէս, սեղան, ջեռոց, կարպետ և որ ի կարգին:
Հասցէն է՝
MARTIN KEENOW
79 Green St. ; Albany N. Y.

ԱՋԴ

Գաղաքի Հայկազեան Կանաճն որոշած է շքեղ հանդէս մը տալ Գեկտ. 2, Շարաթ կրկնայ, ուր բացի այլ և այլ ներկայացումներէ ու զինուորական ցայցերէ, Սպանո-Ամերիկեան պատերազմի ներկայացումներ ալ պիտի տրուին: Ի Գիմաց Հայկազեան Կանաճի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱՌ ԶԵՆՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ Անգլիերէն և Հայերէն Սշխատասիրք ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ Հրատարակութիւն Էլիաս Խալաֆ և Ընկ. Նիու Սօրք

Կը պարունակէ շուրջ 25,000 բառեր, ընտիր Ամերիկեան արտասանութեամբ և խիստ զբաղակալանալի բացատրութիւններով:

Գինն է \$2.50
Գիմել առ J. CHOOLJIAN, College Point, N. Y.

Գրքերը Հոկտ. 20էն վերջ ծախու պիտի գտնուին հետեալ անձերու քով: Մամլաբարձեան Եղարք, Փաթթան, Ն. Ճ. Յ. Պատմաճեան, Սթիւրլինկ, Ն. Ճ. Ապահուել Եղարք, Չըլսի, Մասս. Խ. Կոստանդեան, Լօրէնս, Մասս. Յ. Բարակեան, Ուսթըր, Մասս. Թ. Թօփրահանեան, Ֆրէզնօ, Իալ.

Ներկայիս կը խնդրեմ մեր բաժանորդներէն, որ հաճին իրենց Առ Զեան Ամերիկեան Բառարանի բաժանորդագրութեանց ստացագրքեր ինձ վերագարծնել իրենց ներկայ հասցէովը միասին և ստանալ իրենց Բառարանը:

Պ. Ռ. Թորոսեան
564 Clinton Ave.
West Hoboken, N. J.

Կը ծախուի նաև խմբագրութեան քով:

Պ Ա Տ Կ Ե Ի Ն Ե Ր

(Մեր անգլերէն) Գրեց Վ. ՇԱՀԷՆԻ Գին 15 սէնթ:

Կը պարունակէ շորս վէպիկներ Հայաստանի նորագոյն իրական կեանքէն աւելուած:

Կը վաճառուի Նիւ Եորքի մէջ «Չայն Հայրենեացի» խմբագրատան և Հայկական Ընթերցարանի Թանգարանակալ Պ. Ղ. Պոյաճեանի օտոս:

Սակաւաթիւ օրինակներ մնացած են:

ԿԸ ՄԱՍԻՍԻ

Նպարավաճառի խանութ մը, նաև նոյն խանութի ետև նոյն շէնքին մէջ Հայկական ճաշարան մը, հացի փուռ մը, ձի մը և կառքը ստիպուած ենք ծախել: անհրաժեշտ երկիր քրթալու պէտք զգալուս համար: Չափաւոր գնով պիտի ծախենք. փափաքողք կրնան նամակաւ կամ անձամբ գիմել հետեալ հասցէին:

Ա. Պէտտեան,
37 Center St., Cor. Middlesex.

ԱՐԲԱՆԱՍԵԱՆ ԵՂԱՐՔ

Օղիի և Մասթիքայի Պատրաստողներ Արեւելեան օղիի և Մասթիքայի անդրանիկի և միակ գործարանը ունինք Մ. Նահանգաց կառավարութեան վաւերացեալ:

Միայն պատուական խողովք է և չամիլէ կը պատրաստենք: Մի խմէք օտար և անխորթ խմելիքներ. որ շքիասուրբ: Խմեցէք Հայրենիքի զուտ օղին և մասթիքան, որ խնամքով կը մատակարարենք:

Եթէ որ և է Հայ մը մանաւանդ Հայ բժիշկներ կրնան վաւերացնել ամենափոքրիկ խորագրութիւն մը մեր ըմպելեաց մէջ, պատրաստ ենք իրենց փորձերուն համար բոլոր ծախքեր և 500 առլար ալ գրաւ վճարել:

Ուսուցիչներ կրնան ստանալ օղի և մասթիքա 111 Summer St. ի ըմպելեաց մեծ վաճառատունէն:

Ուրիշ քաղաքաց Հայեր կրնան գիմել կամ գրել ուղղակի մեր զատարանը: Abraham Bro's
20—22—24 Book St.
Providence R. I

ԻՐԱՒՈՒՆԻ

Լրագիր ազգային և քաղաքական կը հրատարակուի ամեն չորեքշաբթի և շաբաթ օրերը: Տարեկան բաժանորդագրին է Ամերիկայի Համար երկու տուար:


Հասցէ՝ Redaction du Journal «IRAVOUNK», VARNA (Bulgarie)

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Տ Ա Ռ
Ս, Տամպուրաճեան
509 2րդ Ալլէն. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արեւելեան և արեւմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և առօրեայ թարմ միտ:

Ուսուցիչ պատուական պըղուրը և ծեծած փաւընտը 3 սէնթ, մեծաքանակ գնողներուն համար 2½ սէնթի, Հայկական պանիրին փաւընտը 15, իսկ մեծաքանակ գնողին համար 13½ սէնթի: ձիթապտուղի փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, ձիթապտուղի պատուական իւղին կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով. յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:



Դ Ե Ր Չ Ա Կ

ՅԱԿՈՒՆ ՈՒՁՈՒՆԵԱՆ

159 Իսթ, 27րդ փողոց
Թէ պատուական և թէ աժան հանգեր մը կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք սուղ կը շինենք — բայց չէ՞ մեր գործին որքան աժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասնալ. անոնք որ իրենց գրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զըլձուր չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն աժան պատրաստի հանգեր մը ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարողուցենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր Հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

Ա Չ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կանաճը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով, իւր մարդութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ալլէն 33 և 34րդ փողոցի մէջ տեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրկուներս ժամը 8էն 10ը:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ
Եգիպտոսէն Գրիգոր ձիթեցեանի և Եղիա Փէշիվանեանի (Արարկերցիք) հասցէները հաղորդել խմբագրութեան կամ թրոյ Մ. Հայրապետեանի: P. O. Box 474 Troy N. Y.

ԿԸ ՓՆՏՈՒԻ
Քարտիկի Յակոբ Կանճօսան, որուն ուր ըլլալը շոր տարիներէ ի վեր յայտնի չէ, և եղբայր անցեալ ամսուն հայրենիքէն եկած ըլլալով՝ կը խնդրուի անոր հասցէն հաղորդել: Asador Ganjoian
63 Honover St.
Worcester Mass.